



ՀԱՅՈՑ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՊՏՀ փիլիսոփայության և հայոց պատմության
ամբիոնի պատվավոր վարիչ,
փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

1918 թ. ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հոգևածում 1918 թ. մայիսյան հերոսամարտերը քննարկվում են հայ ժողովրդի ազատագրական պայքարի գաղափարախոսության համատեքստում: Այդ գաղափարախոսության մեջ առանձնացվում է երկու ուղղություն՝ կրավորական և ներգործական: Առաջինում հայ ժողովրդի ազատագրումը դիտվում է օտար քրիստոնյա տերությունների օգնության դիտանկյունից:

Խոշորագույն ներկայացուցիչը եղել է հայ եկեղեցին: Ներգործական ուղղության ներկայացուցիչների կարծիքով հայ ժողովուրդը պետք է պայքարի իր ազատության համար, հույսը միայն իր վրա դնի: Ըստ հեղինակի՝ 1918 թ. մայիսյան հերոսամարտերում հայ ժողովուրդը հաղթեց, որովհետև համազգային կռիվ տվեց թշնամու դեմ: Մայիսյան հերոսամարտերը օրինակ հանդիսացան արցախյան պատերազմի մասնակիցների համար:

Հիմնաբառեր. ազատագրական պայքար, գաղափարախոսություն, ազգային գաղափարախոսություն, ազատագրական պայքարի կրավորական ուղղություն, ազատագրական պայքարի ներգործական ուղղություն, հայ եկեղեցի, հերոսական, ազգային-պահպանողական հոսանք, ազգային-դեմոկրատական հոսանք, վճռական մենակի հոգեբանություն, պարտվողական, արի, արիադավան, զոհի բարոյթ, հերոսամարտ

JEL: Z0, Z00, Z19

Սկսենք որոշակի աշխարհաքաղաքական կամ երկրատարածքային փիլիսոփայություն ներկայացնելով: Աշխարհագրական միջավայրը, տարածքը երկրաբանական այն հատվածն է, որտեղ տևական ժամանակահատվածում ապրում և վերարտադրվում է նույն հանրությունը, որը դառնում է էթնոս և ծավալում տնտեսական, սոցիալական, քաղաքական, մշակութային գործունեություն: Էթնոսի ձևավորման, կայացման և գործունեության տարբեր փուլերում տարածքի դերը տարբեր է:

Ամենավաղ փուլում, երբ մարդկանց որոշակի խումբ նոր է միայն սկսում նստակյաց ապրելակերպ վարել նույն տարածքում, վերջինս հանրույթի վրա էական ազդեցություն չի թողնում: Ազդեցությունը դառնում է էական, երբ հանրույթը նույն տարածքի վրա ապրում է հարյուրամյակներ, հազարամյակներ շարունակ, երբ տարածքը դառնում է էթնոսի տնտեսական գործունեության վայրը և թելադրում կենսակերպը:

Տարածքի ընտրությունը, որն աստիճանաբար դառնում է հայրենիք, երբեմն ճակատագրական է դառնում ազգի համար: Նման դեր կատարեց Հայկական բարձրավանդակը հայ ժողովրդի կյանքում:

Այս դիտանկյունից համառոտ անդրադառնանք Հայկ Ասատրյանի¹ և Լևոն Շանթի հայացքներին: Ըստ Հայկ Ասատրյանի՝ Հայաստանն իր բնությամբ և աշխարհագրական դիրքով եղել է հավիտենական կռվախնձոր Ասիայի և Եվրոպայի միջև, բայց «.... նաեւ՝ բնական անհատականութեան ինքնատիպ մի մարզ, ցցւած եւ մեկի, և միւսի դէմ»²: Հայ ժողովուրդը, պայմանավորված իր երկրի աշխարհագրական դիրքով, մնաց ինքնատիպ անհատականություն Եվրոպայի և Ասիայի հակամետ ազդեցությունների միջև, միշտ ընդվզեց երկուսի դեմ միաժամանակ, մերթ մեկի հետ եղավ, մերթ մյուսի, բայց չկարողացավ նրանց ծնկի բերել, թեև նրանք էլ չկարողացան իրեն կլանել³: Հայկ Ասատրյանի կարծիքով, հայերը, ցավոք, չեն օգտագործել իրենց բնական-աշխարհագրական առավելությունները, իջել են լեռներից, երկրի ռազմական դիրքերը հանձնել քրդերին, մի վայրկյան հանգիստ ապրելու համար բռնել արտագաղթի ճանապարհը:

Մեր չքնաղ լեռնաշխարհում վարել ենք հարթավայրային ժողովուրդներին վայել կենցաղ և հոգեբանություն, չենք օգտագործել անառիկ լեռների «ռազմագիտական արժեքները»⁴: Այս ամենի հետևանքով մեզանում ձևավորվել է «պատշաճեցումի կամք», ինչը պատճառ է դարձել համահայկական կորովի ցրման, համակերպվել ենք ինքնապաշտպանության, այլ ոչ թե հարձակողական հոգեբանությանը: Հարմարվելու մեջ «.... ապիկար եղանք եւ պատշաճեցումի նուազ կորով յայտնաբերեցինք: Դրա համար էլ թէ՛ հայրենիք, թէ՛ հայոց հազարամյակների հերոսականի ողբերգական վախճանը տեսանք»⁵:

Լևոն Շանթը նույնպես այն համոզմանն է, որ Հայաստանի աշխարհագրական դիրքն է պատերազմների հավիտենական թատերաբեմ լինելու պատճառը, որովհետև միշտ ընկած է եղել երկու հարևան հզոր տերություն-

¹ Հայկ Ասատրյան (1900-1956). հայ ազգային գործիչ, փիլիսոփա, ցեղակրոն շարժման, տարրականության գաղափարախոսության հիմնադիրներից, Գարեգին Նժդեհի համախոհ և գաղափարակից:

² Հ. Ասատրյան, Հատընտիր, Եր., 2004, էջ 22:

³ Տե՛ս նույն տեղը, էջ 35:

⁴ Նույն տեղում, էջ 31:

⁵ Նույն տեղում:

ների, հաճախ երկու հակադիր քաղաքակրթությունների խաչմերուկում⁶:

Բախվելով պետությունների և ժողովուրդների հետ (Պարսկաստան, Հռոմ, Բյուզանդիա, Արաբական խալիֆայություն), մերթ հաղթելով, մերթ պարտվելով, ուժեղ թե թույլ՝ դուրս եկանք XI դարը, մինչև սելջուկների արշավանքները Հայաստան:

Ըստ Գ. Ահարոնյանի՝ XI դարում 6 միլիոն հայ կար աշխարհում. Անգլիական թագավորությունում բնակչության թիվը հասնում էր 2 միլիոնի: Մեր հայրենիքի տարածքը հասնում էր 300.000 կմ², որտեղ իշխում էին հայ թագավորներ-իշխանները, բնակչության բացարձակ մեծամասնությունը հայ էր: Հայն աշխարհի ամենից զարգացած քաղաքակրթություններից էր, ուներ ամենաբարգավաճ տնտեսություններից մեկը: Քրիստոնյա Եվրոպայում չկար մի երկիր կամ ժողովուրդ, որ համեմատվեր հայերի հետ: Երբ Փարիզը և Լոնդոնը ունեին ընդամենը 10 հազար բնակիչ, իսկ Հռոմը՝ 50-60 հազար, հայկական մի քանի քաղաքների (Անի, Արծն) բնակչությունը հարյուր հազարի էր հասնում: Աշխարհի մեջ հազիվ «.... քանի մը ժողովուրդներ մշակութապես և տնտեսապես կրնային բաղդատուիլ իրեն (հայերին.— Ա. Ս.).... Հայ ժողովուրդը իրավունք ուներ հպարտանալու իր յաջողութիւններով ու նուաճումներով, իր դպրութեամբ և մշակոյթով: Եւ անշուշտ ապագային կը նայէր լաւատեսութեամբ, ինքնավստահութեամբ»⁷:

XI դարից իրադարձություններն այլ ընթացք ստացան: Բյուզանդիայի հայ կայսրերի հայադավ քաղաքականության պատճառով վերացավ հայկական պետականությունը մայր հայրենիքում, սելջուկները, առանց լուրջ դիմադրության, գրավեցին երկրի մեծ մասը, 1064 թ. գրավեցին Անին, անխնա կողոպտեցին Արծնը, Վանը, Դվինը և այլ քաղաքներ ու վայրեր: Ճիշտ է, դեռ որոշ ժամանակ ունեցանք պետություն՝ ի դեմս Ջաքարյանների իշխանապետության, տեղային իշխանություններ, իսկ Կիլիկիայում ստեղծեցինք իշխանություն և թագավորություն:

Հայ ժողովուրդը կարողացավ շտկել մեջքը, շունչ քաշել, վերականգնել տնտեսությունը, մշակույթը, նորից չափվել Եվրոպայի հետ, ինչը ստիպեց եվրոպացիներին ոչ միայն ընդունել «Հայկական վերածննդի» փաստը, այլև այն, որ վերջինս նախորդել է նույնիսկ իտալականին՝ երկու հարյուր տարով: Հայը դեռ նոր էր բռնել վերածննդի ուղին, երբ ամեն ինչ շուռ եկավ ու շարունակվեց մինչև 1918 թվականը:

Իրար հաջորդեցին մեծագույն արհավիրքները՝ մոնղոլական, թաթարական, Ակ և Կարա Կոյունլու ցեղերի և ցեղախմբերի արշավանքները, որոնց թողած հետևանքները հայ պատմիչները համեմատում էին տարերային աղետների հետ: Անգլիացի պատմաբան Է. Գիբոնի (1737–1794) կարծիքով՝ եթե սելջուկները պոկեցին Արևելքի ժողովուրդների քաղաքակրթության ծառի ծաղիկները, ապա մոնղոլները պոկեցին նաև տերևները, մենք էլ ավելացնենք՝ արմատախիլ արեցին արմատները: Մի քանի դար շարունակ Հայաստանը դարձավ թուրք-պարսկական պատերազմական գործողությունների թատերաբեմ, թուրք-պարսկական գործերի ոտքի կոխան:

Հայաստանը բաժանվեց Թուրքիայի և Պարսկաստանի, իսկ XIX դարում՝ նաև Ռուսաստանի միջև:

⁶ Տես Լ. Շանթ, Ազգութիւնը իմը մարդկային ընկերութեան, Եր., 1999, էջ 9:

⁷ Գ. Ահարոնյան, Մեծ երազի ճամբուն վրայ // Ակնարկ հայկական հարցի պատմութեան վրայ, Գ տպագրութիւն, Լոս Անճելէս, 1986, էջ 10:

Արդյունքում՝

1. Վերջնականապես կորցրինք իշխանության վերջին մնացորդները:
2. Դատարկվեցին, կործանվեցին մեր բազմաթիվ շեն ու լի քաղաքները, ավանները, գրեթե դադարեց շինարարական աշխատանքը:

3. Փոխվեց ժողովրդագրական իրավիճակը. բնակչության աճի փոխարեն ունեցանք հետաճ, նվազում: XI դարում 6 միլիոնանոց ժողովուրդը XIX դար մտավ մոտ 3 միլիոնով:

4. Տնտեսական հարաբերությունները, առևտրական հաղորդակցությունը գրեթե դադարեցին, եղածն էլ դարձավ թալանի և ավարառության առարկա:

5. Սկիզբ դրվեց զանգվածային արտագաղթին, երկիրը սկսեց դատարկվել, փոխարենը Հայաստան ներխուժեցին քրդերը, թուրքերը, լեզգիները. ազգը դադարեց մոնոէթնիկ, միաձույլ լինելուց, որի արդյունքում «...խաթարուեցավ մեր երկրին գերազանցապես հավաքական դիմագիծը»⁸:

6. Մայր հայրենիքում տևական ժամանակով (մինչև XIX դարի կեսեր) անկում ապրեց մշակույթը: Մշակույթի ընդհատված ավանդույթների վերականգնման (XVII դարի երկրորդ կես), աշխուժացման (XVIII դար) և զարթոնքի (XIX դար) մասին կարելի է խոսել միայն հայրենիքից դուրս՝ գաղթօջախների հետ կապված, որովհետև նշված ժամանակաշրջանում (XV դարի առաջին կեսից մինչև XIX դարի կեսերը) հայության կյանքում արձանագրվել է շատ տարօրինակ իրողություն՝ ժողովրդի բացարձակ մեծամասնությունն ապրել է մայր հայրենիքում, իսկ մշակույթն ու մտավորականությունը՝ գաղթօջախներում (մարմինը ներսում էր, գլուխը՝ դրսում), որը ցավալի հետևանքներ ունեցավ XIX դարի երկրորդ կեսի (հատկապես դարավերջի և XX դարասկզբի) հայ ազատագրական պայքարը ճիշտ կազմակերպելու, երկրի ու ժողովրդի իրական վիճակը հստակ ու սթափ գնահատելու առումներով: Բուն հայրենիքում լուսավորություն տարածելու, մշակութային կյանքն աշխուժացնելու ձգտումը, ըստ էության, սկսվում է XIX դարի կեսերից:

7. Երկրի ներսում ըմբոստ, ազատատենչ տարրը վերացավ, հայը դարձավ համակերպվող, սկսեց ապրել՝ հայացքն աստծուն ուղղելով, բայց ազատության ոգին չմարեց, մնաց մշակույթում, հոգևոր գործունեության մշակութային ձևերում, փիլիսոփայության մեջ, սոցիալ-քաղաքական մտքում: Նոր ժամանակի մեր ողջ մշակույթը, փիլիսոփայությունը, սոցիալ-քաղաքական միտքը կարելի է բնութագրել որպես մաքառման, ազգային գոյապայքարի մշակույթ, փիլիսոփայություն և սոցիալ-քաղաքական միտք, որն իր արտահայտությունն ստացավ ազգային գաղափարախոսության հիմնական սկզբունքների մշակման մեջ: Դրանք էին.

1. Ազգի պատմական անցյալի ճանաչում և իմաստավորում (որպես ազգ ի՞նչ ենք մեզանից ներկայացրել անցյալում: Ի դեպ, անցյալ ասելով XVIII դարի վերջի և XIX դարի երկրորդ կեսի հայ գաղափարախոսները նկատի ունեին հեռավոր՝ մախաբրիստոնեական ժամանակաշրջանը և քրիստոնեության պետականացումից հետո եկող մի քանի դարերը):

2. Ազգի առկա կեցության ճանաչում և իմաստավորում (որպես ազգ ի՞նչ ենք դարձել):

3. Ազգի գոյության իմաստի և նպատակի ձևակերպում (ո՞րն է ազգի գոյության իմաստը):

⁸ Նոյն տեղում, էջ 13:

4. Նպատակին հասնելու միջոցների ընտրության խնդիրները:

Բարձրացված հարցերի առանձին դրվագների, հարցադրումների, դրանց լուծումների առաջադրումների մենք հանդիպում ենք V դարից սկսած, բայց ամբողջական, համակարգային, նպատակամղված քննարկումները սկսվում են XVIII դարի վերջերին և շարունակվում ամբողջ XIX դարում, հատկապես դրա երկրորդ կեսին և XX դարի սկզբներին, երբ զարթոնք է ապրում ազգային կյանքը, ազգային գիտակցությունն ու ինքնագիտակցությունը: Թվարկված ժամանակահատվածի հայ գեղարվեստական-հրապարակախոսական մտքի մեջ կարմիր թելի պես անցնում է «Ո՞վ ենք մենք, որտեղի՞ց ենք գալիս և ու՞ր ենք գնում» հարցադրումը, որովհետև, ինչպես իրավացիորեն նշում է XIX դարի հայ նշանավոր գործիչ և մտածող Մ. Մամուրյանը. «Իր անցյալից, ներկայից անտեղյակ ու նպատակը չիմացող ազգը նման է երկուտանի անբանների դասակի»⁹:

Թվարկված հարցերից վերջին երկուսը վերաբերում են ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությանը, որովհետև հարցադրումից (ո՞րն է ազգի գոյության նպատակը) անմիջապես բխում է պատասխանը՝ սեփական երկրում (հայրենիքում) սեփական պետականության ստեղծումը (վերականգնումը) և ազատ, ինքնուրույն, անկախ կյանքով ապրելը: Այս հարցում հասարակական հոսանքների, քաղաքական շերտերի միջև տարածայնություն գոյություն չունեի: Բոլորն էլ համակարծիք էին, որ ազգի արժանապատիվ գոյության և հուսալի ապագայի համար անհրաժեշտ է ստեղծել (կամ վերականգնել) ազգային պետություն: Տեսակետների սուր և սկզբունքային բախումը դիտվեց նպատակի իրականացմանն ուղղված միջոցների ընտրության հարցում. ինչպե՞ս, ի՞նչ ուղիներով ստեղծենք կամ վերականգնենք մեր պետականությունը:

Ձևավորվեցին երկու իրարամերժ ուղղություններ (տեսակետ, հայեցակարգ, մոտեցում), որոնցից մեկը կարելի է պայմանականորեն անվանել **կրավորական** կամ պասիվ պայքարի ուղղություն, որի խոշորագույն ներկայացուցիչը դարեր շարունակ եղել են հայ եկեղեցին, հոգևորականները, առանձին մտավորականներ, իսկ XIX դարի երկրորդ կեսին տեսակետը պաշտպանում էին ազգային-պահպանողական հոսանքի ներկայացուցիչները:

Ըստ այս հայեցակարգի կողմնակիցների՝ հայ ժողովուրդը իր երկրի աշխարհագրական դիրքով (ինչի մասին սկզբում նշվեց), կրոնով (քրիստոնյա ժողովուրդ, որը շրջապատված էր մահմեդական աշխարհով և հպատակվում էր մահմեդականներին) գտնվում է մեկուսացման մեջ: Չունենալով զորք, զենք, չտիրապետելով ռազմական արվեստի տարրերին՝ չի կարելի ապստամբել տիրող հզոր տերության դեմ, որովհետև, ամենայն հավանականությամբ, կպարտվենք, իսկ պարտությունը հղի է ամենավտանգավոր հետևանքներով, քանի որ կարող ենք կորցնել եղածն էլ, ոչնչանանք ընդհանրապես: Նման պայմաններում չարիքի նվազագույնը հպատակվելն է, զրկանքները համբերությամբ տանելը, տիրողի նկատմամբ հավատարիմ հպատակ ներկայանալը (որպեսզի բարեհաճությունը շահես), հնարավորության դեպքում երկրի ներսում բարեփոխումներ իրականացնելը, առանձնաշնորհումներ ձեռք բերելը և ազգային արժեքները (հայրենիք, լեզու, մշակույթ, ընտանիք, դավանանք) պահպանելը՝ մինչև կհասունանան պայմանները և քրիստոնյա պետությունների (եվրոպական պետություններ) կամ պետության

⁹ Մ. Մամուրյան, Երկեր, Եր., 1966, էջ 108:

(Ռուսաստան) միջոցով և օգնությամբ կազատագրվենք ու նրանց հովանու ներքո կստեղծենք մեր պետությունը: Առաջնորդվելով այս տեսակետով՝ հայ եկեղեցին երկրի ներսում և երկրից դուրս բոլոր միջոցներով խոչընդոտել է ազգային շարժումները, առանձին անհատների՝ այդ ուղղությամբ ներդրած ջանքերը, միաժամանակ պատվիրակություններ, բանագնացներ է ուղարկել Եվրոպա, Ռուսաստան՝ հայերին այլադավաններից ազատագրելու խնդրանքով:

Երկրի ներսում կրոնական կապերով միավորելով և հսկելով ներսում, հնարավորության դեպքում նաև դրսում գտնվող հայերին, քարոզելով համակերպում, դատապարտելի համարելով ցանկացած բողոք, ըմբոստություն նման վիճակի դեմ՝ եկեղեցին տիրող պետությանը փորձել է հանդգել, որ.

- Ինքը վստահելի հաստատություն է, կարող է ժողովրդին հնազանդության և հպատակության մեջ պահել:
- Ժողովուրդը հպատակասեր է «բարեխնամ կառավարության նկատմամբ»:
- Կարելի է վստահել, հնարավորության դեպքում առանձնաշնորհումների միջոցով թեթևացնել ազգի վիճակը:

1877 թ., երբ եվրոպական դեսպանները թուրքերի առջև դրեցին ապստամբ սլավոնական ազգերին առանձնաշնորհումներ տալու խնդիրը, արևմտահայության ձակատագրով շահագրգռված Կ.Պոլսի հայոց պատրիարքարանը, որոշ մտավորականներ բողոքեցին՝ հայտարարելով, թե Օսմանյան կայսրությանը ամենահավատարիմը եղել են հայերը, հետևաբար՝ առաջինը նրանց պետք է առանձնաշնորհումներ տալ:

«Հավատարիմ հպատակի» խաղ-քաղաքականությունը հատկապես նկատելի է XIX դարի Կ.Պոլսի հայ պատրիարքների և սուլթանի հարաբերություններում: Օրինակ՝ երբ 1876 թ. սլավոնական բախտակից ազգերը ապստամբեցին, Ներսես Վարժապետյանը հանդես եկավ ամենաթրքահաճ շրջաբերականով, որտեղ հայտարարեց, որ այդ պատերազմում հայերը պետք է պաշտպանեն Օսմանյան Թուրքիային, որովհետև «...Օսմանեան երկիրը պաշտպանել՝ Հայաստանը պաշտպանել ըսել է. նույնիսկ հայուն կրօնը, դպրոցը, ինչքը, տունը, ընտանիքը և պատիվը ու կեանքը պաշտպանել ըսել է»¹⁰:

1877 թ. սուլթանը քրդերի միջոցով ջարդեր կազմակերպեց հայկական գյուղերում, միաժամանակ Օսմանիե շքանշանով պարգևատրեց Ներսես Վարժապետյան պատրիարքին, իսկ պատրիարքը հայտարարեց՝ երանի թե արժանի լինենք այդ «հրեշտականման սուլթանին», և այդպես տարիներ շարունակ, ինչը նույնիսկ ազգային պահպանողական հոսանքի ներկայացուցիչ Սպանդար Սպանդարյանին զայրացրեց, ով հայտարարեց, որ նման դիվանագիտություն «...սափրիչների մօտ էլ կարելի է սովորել»¹¹:

Անշուշտ, հասկանալի է եկեղեցու մտահոգությունը՝ ազգը պահպանել, հեռու պահել վտանգներից: Հիմնական մոտեցումն այն էր, որ պետք է անտրտունջ տանել դառնությունները, որովհետև ազգի՝ այս վիճակում հայտնվելը աստծո կամքի արտահայտությունն է, հետևաբար՝ դրա հաղթահարումն էլ պետք է աստծուն թողնել, ուստի պետք է համբերել մինչև ահեղ

¹⁰ Ներսես պատրիարքի շրջաբերականը // Մշակ, 1876, թիվ 33, էջ 3:

¹¹ Սպ. Սպանդարեան, Ներսես պատրիարքի հրաժարականը և ազգի դրութիւնը // Մեղու Հայաստանի, 1882, թիվ 39, էջ 1:

դատաստան: Հենց այս գաղափարն է քարոզում Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի քահանան. «Պոտի համբերենք, համբերությունը կյանք ա: Կարելի ա, որ մեկ օր աստուծո ողորմության դուռը բացվի. յա էն ա, բոլորս էլ կկոտորվինք, կփչանանք ու աստուծո սուրբ տեսությանը կարժանանանք, կամ թե չէ՝ մեկ ճար կըլի մեզ: Քրիստոնեն սրով չի՛ պետք է իր բանը յուր տանի. նրա թուրը իր համբերությունն ու հավատն ա... Ամա էլի եմ ասում՝ քրիստոնեն թրի կոթն էլ ձեռ չի՛ պիտի առնի, կարճ, որ քար էլ աղան գլխին»¹²:

Եկեղեցին գործադրեց իր ողջ գաղափարական զինանոցը, առաջին պլան մղվեցին «չարին չհակառակվելու», «մի երեսիդ ապտակում են, մյուսը դեմ տուր», «սիրեցեք ձեր թշնամիներին», ինչպես հետագայում Նժդեհը կասեր «տնանկների և սնանկների» սխալ հասկացված քարոզչությունը: Դարեր տևած այս քարոզչությունը ազդեց ժողովրդի մտածողության, հոգեբանության, վարքագծի վրա, դիտվեց որպես օրինակատառական ճշմարիտ ձև, և ցանկացած այլ վարքագիծ, որ դեմ էր գնում այս քարոզչությանը, ժողովրդի կողմից ընկալվեց որպես անհնազանդություն քրիստոնեության սկզբունքներին, եկեղեցուն և աստծուն: Այս ամենը առաջացրեց անվստահություն սեփական ուժերի նկատմամբ, հուսահատություն և անգործություն, որոնք դարձան արտագաղթը խթանող կարևորագույն գործոններ: Ինչպես իրավացիորեն նշում է սփյուռքահայ գրող Լ. Չորմիսյանը. «Արտագաղթը հուսահատական արարք է, ապագայի հանդեպ լաւատեսութեան բացակայութիւն մը, որ հոգեբանական ամենածանր հարուածը կը կազմէ ինքնապաշտպանութեան»¹³, որովհետև «Որքան տէր կը մնայ ժողովուրդը սեփական պետութեան, այնքան ալ կը կառչի ազատութեան, կը պաշտպանէ զայն եւ դժվարութեամբ կը կիրառարի անկէ: Ազատութիւնը հետզհետէ կը դադրի բնական անհրաժեշտութիւն մը ըլլալէ, երբ ձեռքէ կը հանուի պետականութիւնը»¹⁴:

Կրավորական ուղղության ներկայացուցիչները, նրանց հետ և ողջ ազգը ցնծության և դառն հիասթափության օրեր ապրեցին:

Առաջինը 1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմն էր, որի հետևանքով Արևելյան Հայաստանը մտավ Ռուսաստանի կազմի մեջ: Մեծ էր հայերի ոգևորությունը. թվում էր, թե իրականություն է դառնում հայերի երազանքը: Դրանով պետք է պայմանավորել Ներսես Աշտարակեցու կոչը հայ ժողովրդին. «Հասավ ժամը, երբ աչքով պիտի տեսնենք Արարատյան աշխարհի և հայոց ազգի ազատագրումը... Ոտքի կանգնեք, հայոց քաջեր, թոթափեցեք պարսից լուծը, ուրախացրեք ալեգարդ Մասիսին, մի անգամ արյունով ներկեցեք հայրենի հողերը ու ապա ապրեցեք ազատ»¹⁵:

Խաչատուր Աբովյանը օրհնեց այն «սիսթը», երբ ռուս զինվորի ոտքը մտավ Հայաստան: Բայց հայերը ազատություն չստացան:

¹² Խ. Աբովյան, Վերք Հայաստանի, Երկեր, Եր., 1984, էջ 105–106: Ի դեպ, Աբովյանը անմիջապես տողատակում ավելացնում է. «Էս խոսակցությունիցը իմացողը կիմանա, թե ի՞նչ էր մեր խեղճության պատճառը: Էլ ես չեմ ուզում բերանս բաց անիլ» (նույն տեղում, էջ 106):

¹³ Լ. Չորմիսյան, Համապատկեր Արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, Ա հատոր, 1850–1878, Պէյրուք, 1972, էջ 248:

¹⁴ Նույն տեղում, էջ 250:

¹⁵ Մեջբերումը տես Վ. Պարսամյան, Շ. Հարությունյան, Հայ ժողովրդի պատմություն (1801–1978 թթ.), Եր., 1979, էջ 28:

Երկրորդը 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմն էր, դրա շարունակությունը հանդիսացող Սան Ստեֆանոյի և Բեռլինի որոշումները: Ինչքան մեծ էին հույսերը, այդքան խոր՝ հիասթափությունը:

XIX դարում, մինչև Բեռլինի կոնգրեսը և դրանից հետո, կրավորական տեսակետը եկեղեցուց բացի ներկայացնում էին ազգային պահպանողական հոսանքի ներկայացուցիչները: Նրանք կարծում էին, որ հայը պետք է պահպանի իր պարզ կյանքը, զարգանա տնտեսապես, բարոյապես, գիտության ասպարեզում, դառնա կարևոր տարր թուրքիայում, ձեռք բերի տիրող ազգին հավասար իրավունքներ, ժամանակը իր հաշիվը կտեսնի, և հայն իր կարողությունների շնորհիվ թուրքիայում կդառնա երկրորդ տարր թուրքերից հետո և նրանց հետ միասին կստեղծի թուրք-հայկական քաղաքական մարմին: Քանի դեռ թուրքիայում ապրող հայերը մի քանի հարյուր հազարի հասնող վարժված զինվոր, հարյուրավոր Կրուպի թնդանոթներ և հազարավոր Մարտինի հրացաններ, փող, գիտություն և արհեստներ չունենան, «նոցա ցոյցերը պետք է կայանան միայն օրինաւորութեան և խոհեմութեան սահմանի մէջ»¹⁶: Պետք չէ կրակի հետ խաղալ, խորհուրդ էին տալիս նրանք, որովհետև «անզէն, անկիրթ և անհաս... թու՛վ շատ նուազ ժողովրդի կողմից բուռն ցոյցեր անելը լաւ զինաւորված, զօրեղ տերութեան եւ ազգի դէմ, իւր գլխին թշուառութեան դատակնիք հրավիրել է»¹⁷:

Բեռլինի կոնգրեսից հետո պայքարի կրավորական ուղղությունը ժամանակավորապես մղվեց հետին պլան, և իշխող դարձավ դարձյալ դարերի խորքից եկող ներգործական, ակտիվ պայքարի ուղղությունը, որի կողմնակիցներն էին Մամիկոնյան, Բագրատունիների նախարարական, Կիլիկիայում Ռուբինյան, Հեթումյան իշխանական տները, Սյունիքի և Արցախի մելիքները, իսկ XIX դարի երկրորդ կեսին՝ ազգային-դեմոկրատական հոսանքի ներկայացուցիչները, բեռլինյան անհաջողությունից հետո նույնիսկ որոշ եկեղեցականներ և ազգային պահպանողականներ: Այս ուղղության ներկայացուցիչներ էին Րաֆֆին, Գր. Արծրունին, Մ. Մամուրյանը, Մ. Խրիմյանը՝ Բեռլինից հետո: Մ. Մամուրյանի կարծիքով՝ «Յուսաւ, որ օտար ազգ մը Յուսուսի ըրած հրաշքը պիտի գործէ ըսելով անկեալ ու հէգ ժողովրդեան մը,- Արի՛, ել ... ցնօրք է: Սպասել, որ արտաքին փրկիչները գան և հայ ժողովրդեան սև պատանքը քակին՝ յիմարութիւն է»¹⁸: Րաֆֆու կարծիքով՝ «Ոչ ոք իր հոր հոգու փրկության համար մեզ չի օգնի»¹⁹, որովհետև «...ազատությունը տրվում է այն ազգերին, որոնք իրենց ազատությունը սրով պաշտպանել գիտեն: Առանց արյունի ազատություն չկա, որպես առանց զոհերի՝ փրկություն»²⁰:

Հայերը մինչև «...արիւն չթափեն, չեն կրնար ապրիլ քաղաքանապէս»²¹. Րաֆֆուն երկրորդում է Մ. Մամուրյանը:

«Թղթի շերտփով» Բեռլին գնացած Մ. Խրիմյանը, այնտեղից վերադառնալուց հետո հայտարարում է. «Հայաստանցիներ, այսուհետև սիրեցէք երկաթը, Ձեր փրկութիւն երկաթով կը լինի, այն պատուական երկաթով, որ

¹⁶ Ազգային // Մեղու Հայաստանի, 1878, թիվ 5, էջ 2:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ 1875 (խմբագրական) // Արեւելեան մամուլ, 1875, թիվ 1, էջ 5:

¹⁹ Րաֆֆի, Կայծեր, Երկերի ժողովածու 12 հատորով, հ. 5, Եր., 1985, էջ 574:

²⁰ Րաֆֆի, Դատարկ հույսերով ենք խաբվում, Երկերի ժողովածու 12 հատորով, հ. 11, Եր., 1991, էջ 10:

²¹ Մ. Մամուրեան. Թղթակցութիւն // Արեւելեան մամուլ, 1878, թիվ 5, էջ 36:

Ձեյթունի լեռներէն կ'ելնէ», ու երբ հայրենիք գնալու կլինեք, «մի հրացան ունեցէք ձեր ձեռքը»²²:

Այսպէս ձևավորվեց հողն արյամբ նվաճելու գաղափարախոսությունը, իսկ նրա կողմնակիցները, առիթն օգտագործելով, քննադատեցին եկեղեցուն՝ քարոզած գաղափարախոսության և ծավալած գործունեության համար, որի խտացումը հետագայում դարձավ Գ. Նժդեհի արտահայտած տեսակետը. «Սխալել, չարաչար սխալել է մեր եկեղեցին՝ «տնանկ»ների և «սնանկ»ների բարոյականություն քարոզելով»²³, որովհետև «սխալ է ըմբռնելքրիստոնեական սիրոյ խորհուրդը՝ եւ դրա հետևանքով ամբողջ դարեր պատճառ դարծել մեր ժողովուրդի անօրինակ ողբերգութեան»²⁴:

Եթե XIX դարի 60-80-ական թվականները կարելի է համարել ներգործական ուղղության տեսական-մախապատրաստական շրջան, ապա ազգային-քաղաքական կուսակցությունների ձևավորումից հետո անցում կատարվեց տեսական դրույթների գործնական իրականացման փուլ: Սկսվեց բռնարարքների, ցույցերի, ֆիդայական շարժման, ապստամբությունների մի երկարատև շրջան: Բայց զոհողությունները հսկայական էին, իսկ արդյունքները՝ գրոյական: Այստեղից էլ հարցադրումը. ո՞ր ուղղությունն էր (կրավորակա՞ն, թե՞ ներգործական) իրավացի իր պնդումներում: Հայ տեսական մտքում ընթացող բանավեճը թուրքը լուծեց թրքավարի՝ իրականացնելով եղեռն: Արևմտահայությունը որպես իրողություն դադարեց գոյություն ունենալուց՝ դարձավ սփյուռքահայություն: Հայ ժողովրդին ավելի բնորոշ դարձավ կրավորական կեցվածքն ու պարտվողական հոգեբանությունը: Գաղթականության հոսքի պատճառով նույն հոգեվիճակը տիրող դարձավ արևելահայության մեջ:

Դրան ավելացան 1917–1918 թթ. իրադարձությունները, որոնք կատարելապես աղետ դարձան հայության համար: 1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցավ Հոկտեմբերյան հեղափոխությունը: Նույն տարվա նոյեմբերին Խորհրդային Ռուսաստանի ժողկոմխորհի ստեղծած հանձնաժողովը՝ Ի. Ստալին, Պ. Պռոշյան, Ռոստոմ, Վ. Ավանեսով, Վ. Տերյան կազմով, մշակեց «Թուրքահայաստանի մասին» դեկրետի նախագիծը, որը հաստատվեց դեկտեմբերի 29-ի ժողկոմխորհի նիստում, որով որոշվում էր ռուսական զորքերը դուրս բերել Արևմտյան Հայաստանից: 1918 թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկյան հաշտության բանակցություններում Ռուսաստանն ընդունեց Քառյակ միության (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Թուրքիա, Բուլղարիա) ներկայացրած բոլոր պահանջները, ըստ որի Թուրքիային էին հանձնվելու Արևմտյան Հայաստանն ու Կարսի մարզը: Ռուսաստանը պարտավորվում էր 6–8 շաբաթվա ընթացքում իր զորքերը հանել նշված տարածքներից, գորացրել հայկական բոլոր զինված խմբերը:

1918 թ. փետրվարի 10-ին իր աշխատանքները սկսած Անդրկովկասյան Սեյմը չճանաչեց Բրեստ-Լիտովսկյան պայմանագիրը և Տրապիզոնում մար-

²² Նամակ Թիւրքիայից // Մշակ, 1878, թիվ 159, էջ 3:

²³ Գ. Նժդեհ, Հատընտիր, Եր., 2006, էջ 66:

²⁴ Նույն տեղում, էջ 65: Հայ եկեղեցու քարոզչության քննադատությունը տես նաև Ա. Սարգսյան, Ժամանակակից հայ եկեղեցին, Եր., 1999, էջ 118–121, նույնի եկեղեցին և XIX դարի հայ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունը // Հումանիտար գիտությունների հիմնախնդիրները քաղաքակրթության մարտահրավերների համատեքստում (Գլաձորյան քննարկումներ), Երևանի «Գլաձոր» համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների և հայցորդների ութերորդ գիտական նստաշրջանի հոգվածների ժողովածու, Եր., 2017, էջ 176–203:

տի 14-ին սկսեց առանձին բանակցություններ Թուրքիայի հետ, որը ապրիլի 1-ին ընդհատվեց թուրքական զորքերի հարձակմամբ: Նոր ձևավորված հայկական զորամիավորումները լուրջ դիմադրություն չկարողացան ցույց տալ: 1917 թ. դեկտեմբերի 17-ին ստեղծվեց Երևանի ազգային խորհուրդը, որն էլ իրականացնում էր իշխանությունը հայկական տարածքների վրա. ղեկավարը դարձավ Արամ Մանուկյանը:

Հայկական զորքերի նահանջի հետևանքով Թուրքիային անցան Էրզրումը, Սարիղամիշը, Կարսը, Վանը, իսկ 1918 թ. մայիսի 15-ին՝ Ալեքսանդրապոլը: Արևելահայության ֆիզիկական ոչնչացումը իրական կերպարանք ստացավ: Բայց նահանջի պատճառը ոչ այնքան թուրքերի ռազմական գերիշխանության մեջ էր, որքան մեր զորքի և ժողովրդի հոգեբանության:

1918 թ. մարտի սկզբներին հայկական զորքերը թվաքանակով չէին զիջում հարձակվող թուրքերին: Թ. Նազարբեկյանը գրում է, որ հայկական զինված ուժերը «միանգամայն բավարար էին, որպեսզի ոչ միայն հետ մղվեին թուրքերի սկզբնական հարձակումը, այլև անգամ հաջողություն ունենային»²⁵: Կարսը կարելի էր պաշտպանել 1 ամիս: Կարսի խայտառակ հանձնումը տեղի ունեցավ ապրիլի 10–12-ին: Ի դեպ, Կարսը 2-րդ անգամ դարձյալ խայտառակ ձևով հանձնվեց 1920 թ. հոկտեմբերի 30-ին: Երկու հազար զինվոր, զինվորական և քաղաքական ղեկավարությունը գերի ընկան: Կոտորածը տևեց 3 օր: Մասնագետների պնդմամբ մեր զորքը լավ զինված էր, հագնված, կուշտ, առանց օգնության կարող էր մի քանի ամիս պաշտպանվել, բայց բերդը հանձնվեց առանց կռվի (շրջանառվում է «առանց մեկ փամփուշտ կրակելու» տեսակետը): Ուրեմն խնդիրը ռազմագիտական չէր, այլ հոգեբանական, որն արտահայտվում էր հուսահատությամբ, հուսալքությամբ, բոլորի կողմից լքված լինելու, թշնամու դեմ հանդիման մեն-մենակ մնալու հոգեբանական դատապարտվածությամբ, որը նախորդ դարերից եկող կրավորական կեցվածքի և պարտվողական հոգեբանության դրսևորումն էր նոր պայմաններում: Այդ հոգեբանությունը զորքից փոխանցվեց ժողովրդին և ղեկավարությանը: Բաթումում բանակցող հայկական պատվիրակությունը Խ. Կարճիկյանին հղած հեռագրում խորհուրդ է տալիս «ռազմական դիմադրություն ցույց չտալ թուրքերին»²⁶:

Ընդհանուր խուճապի և պարտվողականության պայմաններում Երևանի քաղաքային դուռնան մայիսի 18-ի ընդլայնված նիստում որոշեց Երևանը հանձնել թուրքերին առանց դիմադրության և բնակչությունը տեղափոխել Կոտայքի բարձրավանդակ և Սևանա լճի ավազան²⁷: Արամ Մանուկյանը մեկնում է Էջմիածին, հորդորում կաթողիկոսին թողնել Ս. Էջմիածինը և հեռանալ Բյուրական: Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը, պատմական զուգահեռներ անցկացնելով Վարդանանց պատերազմի և իրեն համեմատելով Ղևոնդ Երեցի հետ, ասում է. «Ուրեմն վիճակը ծանր է: Ո՛չ տղեքս, Հայոց կաթողիկոսը նահանջող չէ... Ասացե՛ք հայ բանակին, թե ես տեղիցս չեմ շարժվում: Ես չեմ թողնում Ս. Էջմիածինը: Եթե մեր զինվորները նրան չեն կարողանում պաշտպանել, և թուրքերը մտնելու են Ս. Էջմիածին, իմ դիակը պիտի գտնեն Ս. Իջման սրբավայրում... ասացե՛ք զինուորներին, որ նրանք

²⁵ Հայոց պատմություն, հ. III, գիրք 2, Եր., 2015, էջ 619:

²⁶ Նույն տեղում:

²⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 641:

պատասխանատու են բոլոր հայերի կեանքի համար»²⁸:

Հավանաբար կաթողիկոսի արարքն առաջին քայլն էր, որ հոգեփոխեց Արամ Մանուկյանին: Երկրորդը Ազգային խորհրդի շենքի առջև հավաքված ժողովրդի ըմբոստությունն էր Երևանը թողնելու որոշման դեմ, ժողովրդի առջև Արամ Մանուկյանի և Դերենիկ Դեմիրճյանի ելույթները: Ոգեփոխված Արամ Մանուկյանը կարողացավ փոխել ժողովրդի և զորքի տրամադրությունը, նրանց մղել վճռական, գուցեև հայ ժողովրդի ամենաբախտորոշ ճակատամարտին:

Փոփոխված տրամադրություններն անմիջապես երևում են Ա. Շահխաթունու հետ ունեցած զրույցում. «Ի՞նչ է պատահել: Ջղերդ մի կողմ: Դէպի գործ եւ աշխատանք: Յաղթողը մենք ենք լինելու»²⁹:

Վճռական գործողությունները Սարգսրապատի ճակատամարտում սկսվեցին մայիսի 22-ից և ավարտվեցին 29-ին: Մայիսի 22-ին Սարգսրապատում ոչնչացվեց թրքական «Գելիբոլու» դիվիզիայի երկու վաշտ՝ շուրջ 500 զինվոր:

Ի դեպ, դա համարվում էր թրքական ամենաընտիր դիվիզիաներից մեկը, որը 1915 թ. ապրիլին Դարդանեղում (այդ պատճառով անվանվել է նաև «դարդանեղյան») հաղթել էր անգլիական զորքերին, որի 100-ամյակը նշեցին 2015 թ. ապրիլի 24-ին: Մայիսի 22-ից 29-ի ընթացքում անընդմեջ խփում էին հայկական եկեղեցիների գանգերը: Խիստ բարձրացել էր զինվորների մարտական ոգին, ամբողջական խմբերով վերադառնում էին դասալիքները՝ իրենց զենքով և պաշարով: Ջենք էին վերցնում կռվի ընդունակ բոլոր տղամարդիկ, այնտեղ էին 500 մահապարտ հոգևորականներ, կանայք, որոնք սնունդ ու վիրակապ էին հասցնում կռվողներին: Մի խոսքով՝ ռազմական գործողություններին մասնակցում էին շարժվելու ընդունակ բոլոր մարդիկ: Դա, հիրավի, համաժողովրդական կենաց-մահու կռիվ էր, որում էական դեր կատարեց հոգեբանական գործոնը: Ոչ մի անհատ, սոցիալական խումբ, կազմակերպություն, կուսակցություն հաղթանակն իրեն վերագրելու իրավունքը չունի: Դա համաժողովրդական, համահայկական կռիվ էր, ու կռվում հաղթողը զորքն ու ժողովուրդն էին, որտեղ զենքի զորակիցը ոգին էր, հաղթելու վճռականությամբ տոգորված հայ մարդու հոգին, որը զինվորի հագուստով ու առանց դրա էր:

Հայկական զորքերն անցան հարձակման, հետ շարտեցին հարձակվող թուրքերին՝ նպատակ ունենալով գրավելու նաև Ալեքսանդրապոլը, սակայն մայիսի 30-ին Թ. Նազարբեկյանի հրամանով զորքերի հարձակումը կանգնեցվեց՝ առաջացնելով զորքի և ժողովրդի հիասթափությունը: Բաթումում մայիսի 26-29-ը թուրքերի վերջնագիրը ընդունվեց. հաստատվեց զինադադար³⁰: Այդպես տեղի ունեցավ «Սարգսրապատյան հրաշքը»:

Խուճապը, հուսալքությունն ու պարտվողական հոգեբանությունն էին տիրում Դարաքիլիսայի ռազմաճակատում: Հովհաննես Թումանյանի կոչը լռեցիներին առանձնապես ազդեցություն չունեցավ: Ստեղծվեց հաշտության հանձնաժողով՝ թուրքերին հանձնվելու համար: 1918 թ. մայիսի 22-ին Հայոց ազգային խորհրդին ուղղված զեկուցագրում հայկական կորպուսի հրամա-

²⁸ Նույն տեղում:

²⁹ Նույն տեղում:

³⁰ Նույն տեղում, էջ 646:

նատար Թ. Նազարբեկյանը գրում է. «...թուրքերի դեմ կռելու պատրաստ մարդ բացարձակապես չկա»³¹:

Չորքը չէր լսում հրամանատարությանը, դիմադրություն կազմակերպելու մի քանի անձանց կոչերը և փախչում էր Դիլիջան:

Մինչդեռ Արամ Մանուկյանը խնդրում է զորքերի հրամանատարությանը Ղարաքիլիսայի ձակատը պահել ընդամենը 3 օրով: Այնուամենայնիվ, այստեղ էլ ոգեփոխում տեղի ունեցավ, և ունեցանք «Ղարաքիլիսայի հրաշքը», որի պատճառներն էին.

- Մեր զորքերի հաղթանակը Սարդարապատում:

- Մեր երկու զինվորականների՝ հրետանու կապիտան Գուրգեն Տեր-Մովսիսյանի և պորուչիկ Գարեգին Նժդեհի ընդվզումը թուրքերին հանձնվելու որոշմանը:

Կապիտան Գուրգեն Տեր-Մովսիսյանը այդ որոշումը համարեց դավաճանություն, հայտարարեց, որ ինքը գնում է կռվելու. կռվի դաշտում էլ զոհվեց:

Հաջորդը Գարեգին Նժդեհն էր, որը մայիսի 24-ին ելույթ ունեցավ զորքի և ժողովրդի առջև ու հայտարարեց, որ սպաները գնում են անձնատուր լինելու, թող գնան, իսկ ինքը գնում է մեռնելու: Ով դեռ իրեն բարոյապես մեռած չի համարում, թող հետևի իրեն: Եվ նա գնաց քիչ մարդկանցով, կատարեց ամենամեծ գործը՝ իր անձնագոհությամբ պատմությանը տվեց Ղարաքիլիսայի հերոսամարտը, իսկ մեզ՝ անկախ Հայաստան³²: Ժողովուրդն ու զորքը գնացին Մովսիսյանի ու Նժդեհի հետևից. տեղի ունեցավ հոգու և զենքի միավորում, արդյունքում՝ «Ղարաքիլիսայի հրաշքը»: Կռիվը տևեց 4 օր, չորրորդ օրվա վերջին զորքը նահանջեց, որովհետև ո՛չ արկ էր մնացել, ո՛չ փամփուշտ: Իսկ Անդրանիկն իր զորքով նստած էր Դսեղում:

Հետագայում ինքնակենսագրության մեջ Նժդեհը հետևյալ կերպ է գնահատում Ղարաքիլիսայի ձակատամարտը. «Առանց Ղարաքիլիսայի ձակատամարտի ոչ թե օրւայ Խ. Հայաստան, այլ եւ այդ երկրամասի վրայ այսօր ապրող հայութիւն չէինք ունենայ: Ղարաքիլիսայի եռօրեայ հերոսականը փրկեց գլխովին ոչնչացումից Արարատեան հայութիւնը եւ հիմը դրեց Հայկական Պետութեան»³³:

Բաշ Ապարանի ձակատամարտում հուսալքություն չդիտվեց ընդհանրապես: Սկզբում ձակատը պահեցին աշխարհագրայինները՝ մինչև օգնության հասան Սարդարապատի ձակատից հանված որոշ զորամիավորումներ, որոնք Դրոյի հրամանատարությամբ անցան հարձակման և հաղթեցին թուրքերին:

Այսպիսով՝ մայիսյան հերոսամարտերը տևեցին ընդամենը 7 օր՝ մայիսի 22-ից մինչև 29-ը, բայց բախտորոշ նշանակություն ունեցան հայ ժողովրդի այդ օրերի և հետագա ողջ պատմության ու ձակատագրի համար: Մայիսյան հերոսամարտերը.

1. Բարձրացրին հայ ժողովրդի մարտական ոգին, ավելի ստույգ՝ ոգեփոխեցին հայությանը:

2. Թեթևացրին Բաթումում թուրքերի հետ բանակցություն վարող հայ պատվիրակների դրությունը (թեև տեսակետ կա, թե մեր պատվիրակությունը

³¹ Ռ. Համբարձումյան, Նժդեհ, Եր., 2007, էջ 95:

³² Տե՛ս նույն տեղը, էջ 106:

³³ Գ. Նժդեհ, Ինքնակենսագրություն // Հատընտիր, Եր., 2006, էջ 430:

այնքան էլ տեղյակ չէր Հայաստանում ընթացող իրադարձություններից, հակառակ դեպքում այդքան զիջող չէր լինի):

3. Կասեցրին թուրքերի արշավանքը Թիֆլիս և, ժամանակավորապես՝ Բաքու, որտեղ, ըստ էության, հայկական իշխանություն էր ստեղծված:

4. Փրկեցին արևելահայությանը և գաղթականությանը վերջնական բնաջնջումից:

5. Նախադրյալներ ստեղծեցին մեկ անգամ ևս հայկական պետություն ստեղծելու, որը, լավ թե վատ, գոյատևում է մինչև այսօր: Թեև այդ պետությունը Հայաստան աշխարհի մի փոքրիկ անկյունում է, այնուամենայնիվ, հայ ժողովրդի պետությունն է, որն այսօր լուսատու փարոսի դեր է կատարում համայն հայության համար:

6. Ցույց տվեցին, որ օրհասական պահերին (հիարկե, ցավոք, որ միայն այդ պահերին) հայ ժողովուրդը կարող է համախմբվել, միավորվել, մի բռնուցք դառնալ և անկարելի կարելի դարձնել, իրականացնել հրաշք:

7. Համոզեցին, որ սեփական ազատության համար հայ ժողովուրդն ինքը պետք է պայքարի (ապացուցեցին ազատագրական պայքարի ներգործական ուղղության իրավացիությունը), որ օտարի օգնության մեջ չափ չկա, պետք է քեզ վրա հույս դնես և ոչ թե զբաղվես քաղաքական մուրացկանությամբ (Գ. Նժդեհ):

8. Գործնականում ապացուցեցին հետևյալը. որպեսզի փրկվենք, պետք է առաջնորդվենք վճռական մենակի հոգեբանությամբ, լինենք արի և արիադավան (Գ. Նժդեհ):

9. Ժամանակավորապես հայ ժողովրդին ազատեցին կրավորական կեցվածքից և պարտվողական հոգեբանությունից:

Ցավոք, հետագա իրադարձությունները մայիսյան հերոսամարտերի տրամաբանությամբ չընթացան: Հսկայական կորուստներ ունեցանք, բայց կարողացանք պետությունը պահել, հասնել մեր օրերը և ունենալ հայկական երկրորդ պետությունը՝ Արցախը, որը 1918 թ. հերոսամարտերի անմիջական շարունակությունն ու արդյունքն է: Եթե մայիսյան գոյամարտը կրավորական կեցվածքից, պարտվողի հոգեբանությունից ազատվելու առաջին քայլն է, ապա երկրորդը մեր հանրապետության պահպանումն ու Արցախն են, որի ազատագրությանը մասնակցողներից շատերի համար օրինակը 1918 թ. մայիսն էր:

Ու աստված մի արասցե, եթե ռազմական հաղթանակները չամրագրվեն դիվանագիտական ասպարեզում, ապա, հավանաբար, այլևս չենք ազատվի զոհի բարդույթից:

Եվ վերջում: Հեգելը խոսում է պատմության պարադոքսի մասին, ըստ որի փորձը ցույց է տալիս, որ ժողովուրդներն ու պետությունները երբեք ոչինչ չեն սովորում պատմությունից և երբեք չեն առաջնորդվում այն դասերին համապատասխան, որոնք կարելի էր վերցնել պատմությունից: Չեմ ցանկանում, որ դա տեղի ունենա մեզ հետ: Ռուս հայտնի պատմաբան Վասիլի Կուլեզսկին (1841–1911) գրում է, որ պատմությունը ոչ մեկին որևէ բան չի սովորեցնում, բայց դաժանորեն պատժում է նրանց, ովքեր դասեր չեն քաղում պատմությունից: Չեմ ցանկանում, որ մենք պատժվողի դերում լինենք:

Նիցշեն «Այսպես խոսեց Ջրաղաշտը» գրքում ունի հետևյալ մտքերը. «Ապրելու իրավունք ունի այն ժողովուրդը, որն ունի հիշողություն: Իսկ հիշողություն ունենալու համար անհրաժեշտ է պատմություն ունենալ»: Մենք երկուսն էլ ունենք:

Ասուպի նման հայոց մռայլ երկնականարում մի ակնթարթ փայլատակեց ու անցավ մայիսյան գոյամարտը, բայց 100 տարի է՝ հիշում ու հպարտանում ենք: Եվ շարունակելու ենք հիշել ու հպարտանալ, քանի դեռ չենք լուծել մեր ազգի կենսականորեն կարևոր բոլոր խնդիրները:

Օգտագործված գրականություն

1. Ա. Սարգսյան, Ժամանակակից հայ եկեղեցին, Եր., 1999:
2. Ա. Սարգսյան, Ուրվագիծ XIX դարի հայ իմաստասիրության, Եր., 2001:
3. Ա. Սարգսյան, Եկեղեցին և XIX դարի հայ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունը // Հումանիտար գիտությունների հիմնախնդիրները քաղաքակրթության մարտահրավերների համատեքստում (Գլաժորյան քննարկումներ), Երևանի «Գլաժոր» համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների և հայցորդների ութերորդ գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածու, Եր., 2017:
4. Ազգային // Մեղու Հայաստանի, 1878, թիվ 5:
5. Գ. Ահարոնեան, Մեծ երազի ճամբուն վրայ // Ակնարկ հայկական հարցի պատմութեան վրայ, Գ տպագրութիւն, Լոս Անճելէս, 1986:
6. Գ. Նժդեհ, Հատընտիր, Եր., 2006:
7. Լ. Շանթ, Ազգութիւնը հիմք մարդկային ընկերութեան, Եր., 1999:
8. Լ. Չորմիսեան, Համապատկեր Արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, Ա հատոր, 1850–1878, Պէյրութ, 1972:
9. Խ. Աբովյան, Վերք Հայաստանի, Երկեր, Եր., 1984:
10. Հ. Ասատրյան, Հատընտիր, Եր., 2004:
11. Հայոց պատմություն, հ. III, գիրք 2, Եր., 2015,
12. Ռ. Համբարձումյան, Նժդեհ, Եր., 2007:
13. Մ. Մամուրեան, Երկեր, Եր., 1966:
14. Ներսես պատրիարքի շրջաբերականը // Մշակ, թիվ 33, 1876:
15. Սպ. Սպանդարեան, Ներսես պատրիարքի հրաժարականը և ազգի դրութիւնը // Մեղու Հայաստանի, 1882, թիվ 39:
16. Վ. Պարսամյան, Շ. Հարությունյան, Հայ ժողովրդի պատմություն (1801–1978 թթ.), Եր., 1979:
17. Րաֆֆի, Կայծեր, Երկերի ժողովածու 12 հատորով, հ. 5, Եր., 1985:
18. Րաֆֆի, Դատարկ հույսերով ենք խաբվում, Երկերի ժողովածու 12 հատորով, հ. 11, Եր., 1991:

ԱՐԱՄ ՏԱՐԳՏՅԱՆ

*Почётный заведующий кафедрой
философии и армянской истории,
доктор философских наук, профессор*

Майские героические сражения 1918 года в контексте идеологии освободительной борьбы армянского народа. – В статье обсуждаются майские героические битвы 1918 года в контексте идеологии освободительной борьбы армянского народа. В этой идеологии существовали два направления: пассивный и активный. В пассивном направлении освобождение армянского народа рассматривалось с точки зрения помощи иностранных христианских держав – крупнейшим представителем была Армянская церковь.

По мнению представителей активного направления, армянский народ сам должен бороться за свою свободу. По мнению автора, в 1918 году армянский народ победил с помощью национальной борьбы против врага. Майские героические битвы были примером для участников освободительной борьбы в Арцахе.

Ключевые слова: национальная борьба, идеология, национальная идеология, пассивное направление освободительной борьбы, активное направление национальной борьбы, армянская церковь, героическое, национально-консервативное течение, национально-демократическое течение, комплекс жертвы, героическое сражение.

JEL: Z0, Z00, Z19

ԱՐԱՄ ՏԱՐԳՏՅԱՆ

*Honorable Head of the Chair of Philosophy and
Armenian History, Doctor of Philosophy, Professor*

Heroic Battles of May 1918 in the Context of Ideology of the Armenian People's Liberation Struggle. – The article studies the Heroic Battles of May 1918 in the context of ideology of the Armenian people's liberation struggle. In this ideology, there are two directions: passive and active. The first direction of the liberation of the Armenian people is viewed from the viewpoint of foreign Christian powers' help. The prominent representative was the Armenian Church. As to the active – influential representatives, the Armenian people must struggle for their freedom without any expectations or hopes from other powers. According to the author, the Armenian people won the Heroic Battles in May 1918, because they had a national struggle against the enemy. The Heroic Battles of May served as examples for Artsakh War participants.

Key words: *liberation struggle, ideology, national ideology, liberal struggle, passive direction of liberation struggle, influential direction of liberation struggle, Armenian Church, heroic and national-conservative flow, national-democratic flow, decisive individual psychology, defeat, brave, brave creed, victim complex, heroic.*

JEL: Z0, Z00, Z19